Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-452-24.01.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի՝

1. 1) 81.1-րդ հոդվածում լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 4.1-րդ մաս՝

«4.1.Դիմողի գրավոր միջնորդության հիման վրա նոտարը ցուցմունք է վերցնում վկայից: Վկայի ներկայությունը ապահովում է դիմողը: Նոտարի մոտ ցուցմունք տալը վկայի իրավունքն է: Նոտարը նախազգուշացնում է վկային սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ վկան ստորագրում է և որը կցվում է նոտարական գործին: Ցուցմունքը ձայնագրվում է, իսկ ձայնագրման կրիչը կցվում է նոտարական գործին: Վկայից ցուցմունք վերցնելիս նոտարը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են սույն հոդվածի դրույթների նկատմամբ:»

2) 5-րդ մասում «այլ» բառից հետո լրացնել «արտադատական» բառը.

3) 9-րդ մասի՝

ա) 1-ին կետում՝ «փաստաթղթերը» բառից հետո լրացնել «կամ վկայի ցուցմունքը» բառերը,

բ) 2-րդ կետում՝ «տվյալներից» բառից հետո լրացնել «կամ վկայի ցուցմունքից» բառերը,

գ) 4-րդ կետում՝ «այլ» բառից հետո լրացնել «արտադատական» բառը,

դ) 5-րդ կետում «պահանջները» բառից հետո լրացնել «,վկայից ցուցմունք վերցնելու դեպքում՝ նույն հոդվածի 4.1-րդ մասի պահանջները» բառերը:

Հոդված 2. 65-րդ հոդվածի 1-ին մասում «, սահմանված կարգով կնքված կամ» բառերը փոխարինել «և» բառով:

Հոդված 3. 66-րդ հոդվածից հանել «, կնիքի դրոշմամբ» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ
Կ-452-24.01.2020-ՊԻ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ
(«Նոտարիատի մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-452-24.01.2020-ՊԻ-011/1) ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի՝

1. 1) 81.1-րդ հոդվածում լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 4.1-րդ մաս՝

«4.1.Դիմողի գրավոր միջնորդության հիման վրա նոտարը ցուցմունք է վերցնում վկայից: Վկայի ներկայությունը ապահովում է դիմողը: Նոտարի մոտ ցուցմունք տալը վկայի իրավունքն է: Նոտարը նախազգուշացնում է վկային սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ վկան ստորագրում է և որը կցվում է նոտարական գործին: Ցուցմունքը ձայնագրվում է, իսկ ձայնագրման կրիչը կցվում է նոտարական գործին: Վկայից ցուցմունք վերցնելիս նոտարը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են սույն հոդվածի դրույթների նկատմամբ:»

2) 5-րդ մասում «այլ» բառից հետո լրացնել «արտադատական» բառը.

3) 9-րդ մասի՝

ա) 1-ին կետում՝ «փաստաթղթերը» բառից հետո լրացնել «կամ վկայի ցուցմունքը» բառերը,

բ) 2-րդ կետում՝ «տվյալներից» բառից հետո լրացնել «կամ վկայի ցուցմունքից» բառերը,

գ) 4-րդ կետում՝ «այլ» բառից հետո լրացնել «արտադատական» բառը,

դ) 5-րդ կետում «պահանջները» բառից հետո լրացնել «,վկայից ցուցմունք վերցնելու դեպքում՝ նույն հոդվածի 4.1-րդ մասի պահանջները» բառերը:

Հոդված 2. 65-րդ հոդվածի 1-ին մասում «, սահմանված կարգով կնքված կամ» բառերը փոխարինել «և» բառով:

Հոդված 3. 66-րդ հոդվածից հանել «, կնիքի դրոշմամբ» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-452-24.01.2020-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծում լրացնել 2-րդ հոդված, որի համաձայն՝ փոփոխություն կկատարվի «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասում: Մասավորապես, նշված հոդվածից պետք է «, սահմանված կարգով կնքված կամ» բառերը փոխարինել «և» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծում լրացնել 3-րդ հոդված կատարել փոփոխություն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածում: Մասավորապես, նշված հոդվածից պետք է հանել «կնիքի դրոշմամբ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծի վերնագիրը փոխել, մասնավորապես դարձնել «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ		